ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/40420-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-237-25.07.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1111 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-237-25.07.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) սահմանել պահանջ, որի համաձայն՝ ազգությամբ հայերի՝ քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումները կքննարկվեն երեքամսյա ժամկետում՝ ընդհանուր կանոնի վեցամսյա ժամկետի փոխարեն:

Կառավարությունը մեծապես կարևորում է քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումների քննարկման ժամկետների հետևողական կրճատումը, սակայն ներկա փուլում առաջարկվող ժամկետի կրճատումը կարող է խնդրահարույց լինել քաղաքացիության տրամադրման դիմումներին պատշաճ ընթացքն ապահովելու տեսանկյունից: Բանն այն է, որ իրավասու պետական մարմինների վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում և Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում տարեկան ներկայացվում են մոտ 10.000 դիմումներ, որոնց ճնշող մեծամասնությունը՝ մոտ 95 տոկոսը, կազմում են ազգությամբ հայերի կողմից ներկայացված քաղաքացիության ձեռքբերման դիմումները: Բացի այդ, Կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 498-Ն որոշմամբ սահմանված է քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կարգ, որով ևս որոշակի ժամկետներ են նախատեսվում հանձնաժողովի գործունեության համար:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, Կառավարությունը նախաձեռնել է քննարկվող հարաբերությունները կարգավորող օրենսդրության համակարգային վերանայման գործընթաց: Այս առումով, թեպետև կարևորում ենք Նախագծով առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը, սակայն գտնում ենք, որ նախատեսված ընթացակարգը լիարժեք ձևով կիրառելու համար անհրաժեշտ է Օրենքում մի շարք այլ փոփոխություններ կատարել նաև համապատասխան մեխանիզի ներդրման մասով: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի ընդունումից, հաշվի առնելով այն, որ առաջիկայում Կառավարությունը Ազգային ժողովի քննարկմանը կներկայացնի քաղաքացիության տրամադրման հետ կապված օրենսդրության ամբողջական վերանայման վերաբերյալ օրենքների նախագծերի փաթեթ:

13 օգոստոսի 2019 թվականի N 1111 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-237-25.07.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 13
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-237-25.07.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «վեցամսյա» բառից հետո ավելացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասություն՝

«Ազգությամբ հայերի՝ քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումները քննարկվում են երեքամսյա ժամկետում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

- **Ներկա իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

06.11.1995թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1) քաղաքացիության ճանաչմամբ.

2) ծննդով.

3) քաղաքացիություն ստանալու միջոցով.

4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.

5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

7) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Նույն Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ (բացառությամբ անգործունակ ճանաչված անձի կողմից սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դեպքի), օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրա-պետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով եւ

3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1) որը մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ եւ այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա.

2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար.

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 01.01.2012 թվականից՝ 08.12.11 ՀՕ-319-Ն օրենք)

4) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

5) որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ պարզեցված կարգը ենթադրում է, որ ազգությամբ հայերի համար ՀՀ քաղաքացիության ձեռքբերման համար իմպերատիվ բնույթ չեն կրում վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու եւ հայերեն լեզվի իմացության օրենսդրական պահանջները:

- **Առաջարկվող կարգավորումը**

Օրենքի նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել ցանկացող ազգությամբ հայերի համար ամրագրել նաեւ ընթացակարգային արտոնություն՝ նախատեսելով վերջիններիս՝ քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ դիմումների քննարկման գործող վեցամսյա ժամկետի փոխարեն երեքամսյա ժամկետ:

- **Ակնկալվող արդյունքը**

Օրենքի նախագծով առաջարկվող իրավակարգավորումը թույլ կտա որոշակիորեն խրախուսել մեր հայրենակիցների ներգաղթը ՀՀ, որն էլ, իր հերթին, երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնի ժողովրդագրական պատկերի բարելավմանը: